



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«Հավատարմագրման ազգային մարմին»

ՊՈԱԿ-ի տնօրեն


Ն. Մկրտչյան
(անուն, ազգանուն)

« 29 » դեկտեմբերի 2017 թ.

N 6-ԿՀ հրաման

**Հիմք՝ Հավատարմագրման ազգային
մարմնի հավատարմագրման խորհրդի
2017 թվականի դեկտեմբերի 29-ի
N 1 որոշումը**

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ՀԵՏԵՎԵԼԻՈՒԹՅԱՆ, ՉԱՓՄԱՆ
ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏՐԱՄԱՉԱՓԱՐԿՄԱՆ ԵՎ ՉԱՓՄԱՆ
ԱՆՈՐՈՇՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ
ՇՐՋԱՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
PL-07**

ՄՇԱԿԵԼ Է

Որակի մենեջեր

Նազիկ Արզարյան
(անուն, ազգանուն, ստորագրություն)

Գործարկման թվականը 01.01.2018թ.

Երևան 2017

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ՀԵՏԵՎԵԼԻՈՒԹՅԱՆ, ՉԱՓՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏՐԱՄԱՀԱՓԱՐԿՄԱՆ ԵՎ ՉԱՓՄԱՆ ԱՆՈՐՈՇՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԵՐՁԱՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Համաձայն «ՀՍ ԻՍՕ/ԻԷԿ 17025-2005 Փորձարկման և ստուգաճշտման լաբորատորիաների իրազեկությանը ներկայացվող ընդհանուր պահանջներ» ստանդարտի՝ ՓԼ-ները պետք է ապահովեն չափման միջոցների տրամաչափարկումը, չափումների հետևելիությունը և չափման անորոշությունների գնահատումը:

2. Փորձարկման լաբորատորիաները (այսուհետև՝ ՓԼ) փորձարկման արդյունքների ճշտությունը ներկայացնելու համար պետք է գնահատեն չափման անորոշությունները:

ՓԼ պետք է ունենա չափման անորոշությունների գնահատման, չափման միջոցների տրամաչափարկման ընթացակարգ և իրազեկ աշխատակազմ՝ դրանք իրականացնելու համար:

3. Քանի որ Հայաստանի Հանրապետությունում դեռևս հավատարմագրված է մեկ տրամաչափարկման լաբորատորիա (2017 թվականի փետրվարի 17-ից) և իրականացնում է չափման միջոցների տրամաչափարկում յոթ ուղղություններով, որը մասամբ է ապահովում ՓԼ-ների կողմից կիրառվող չափման միջոցների տրամաչափարկման պահանջը, ապա ՓԼ-ների հավատարմագրման վկայագրերի գործողության ժամկետում հիմք է ընդունվում նաև տրամաչափարկման լաբորատորիաների հետ կնքված պայմանագրերը, որոնց համաձայն սարքերի տրամաչափարկումն անհրաժեշտ է ավարտել մինչև 2018 թվականի մարտի 31-ը ներառյալ:

Չափումների հետևելիության, չափման միջոցների տրամաչափարկման և չափման անորոշությունների գնահատման համար անցումային շրջան սահմանել **մինչև 2018 թվականի մարտի 31-ը ներառյալ:**

4. Սույն քաղաքականության գործողության ժամկետը՝ **01.04.2018թ.:**

5. Սույն քաղաքականության վերանայումը կատարվում է ըստ անհրաժեշտության: